ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

գ. Կարմիրգյուղ «09» «08» 2021թ.
ժ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Ջժմաչյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Աղաջանյան, Ռ. Մկրտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գասպարյան

ՀՀ ԳՄ ԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/05 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգ

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում մասնակիցների հետ.

1. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, <<Չափաբաժին>> 1-ի մասով հայտերի բացման նիստին ներկա լիազորված ներկայացուցիչները լիազորված չէին գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու իրավասությամբ, ուստի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 2021 թվականի օգոստոսի 5-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել էր <<Չափաբաժին>> 1-ին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ 09.08.2021թ.-ին ժամը 15-30-ին գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

2. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակցում էին <<Քյավառ-Սերվիս>> ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը և <<Գավառի ՃՇՇ>> ԲԲԸ-ի լիազորված ներկայացուցիչը, մասնակիցների հետ իրականացվեց միաժամանակյա բանակցություններ, որի ընթացքում <<Քյավառ-Սերվիս>> ՍՊԸ վերանայեց իր կողմից առաջարկած գնային առաջարկը,և առաջարկեց 78000000 /յոթանասուն ութ միլիոն/ ՀՀ դրամ ,<<Գավառի-ՃՇՇ>> ԲԲԸ-ն նույպես վերանայեց իր կողմից առաջարկված գնային առաջարկը և առաջարկեց 77900000 /յոթանասուն յոթ միլիոն ինն հարյուր հազար/ՀՀ դրամ:

3.<<Չափաբաժին>> 2-ին հայտ էր ներկայացրել մեկ մասնակից՝ <<ԱՐՇՏԻԳ>> ՍՊԸ-ն,որի հետ հայտերի բացման նիստին՝ ըստ ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի ա/ ենթակետի դրույթներով

<<ԱՐՇՏԻԳ>> ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչի հետ տարվեց գնի նվազեցման շուրջ բանակցություններ,որի ընթացքում <<ԱՐՇՏԻԳ>> ՍՊԸ-ի առաջարած գնային առաջարկը մնաց նույնը ՈՒստի գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք վերցնել միաժամանակյա բանակցությունների արդյունքում մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները: Արդյունքում մասնակիցների կողմից միաժամանակյա բանակցություններ արդյունքում գնային առաջարկները հետևյալն են:

Չափաբաժին N 1

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային գինը	Արժեք	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	«Գավառ ՃՇՇ» ԲԲԸ	98917060	64916667	12983333	77900000
2	«Քյավառ-Սերվիս» ՍՊԸ		65000000	13000000	78000000

Չափաբաժին N 2

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային գինը	Արժեք	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	«Արշտիգ» ՍՊԸ	44108350	43906508	0	43906508

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Ներկայացրած գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- «Չափաբաժին» N 1՝ «Գավառ ՃՇՇ» ԲԲԸ -ին ճանաչել ընտրված մասնակից:
- «Չափաբաժին»- N 2՝ «ԱՐՇՏԻԳ» ՍՊԸ -ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում.

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ''Չափաբաժին'' N1-ին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները, անգործության ժամկետ սահմանելով՝ <<Չափաբաժին>> N 1 -ի համար 10 օրացուցային օր:
5. <<Չափաբաժին>> N 2-ի հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները անգործության ժամկետ չսահմանել:

<<Չափաբաժին>> N 1–ի համար ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

<<Չափաբաժին>> N 2-ի համար ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում.

4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ, Գ. Նժդեհի 4/1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Ջժմաչյանը

Անդամներ՝ _____ Ս. Աղաջանյանը

_____ Ռ.. Մկրտչյանը

Քարտուղար՝ _____ Ա.Գասպարյան